

## ՄԱՏԵՆԱԹՈՍՈՒԹԻՒՆ

20) Абр. Гукасовъ. Основные черты строения Армянского нагорья.  
Съ картой. Тифлисъ, 1901 г. (отд. отт. изъ XXII-ой кн. „Записокъ“  
К. О. И. Р. Г. О.).

Երկրի անցեալը գրուած է նրա հաստ կեղևի շերտերում:  
Այդ հողաշին էջերի մէջ ցրուած են բոյսերի և կենդանիների  
քարացած մացորդներ, որոնց չնորհիւ երկրաբանը իմանում է  
երկրի գլխով միլիօնաւոր դարերի ընթացքում անցած-դարձած-  
ները: Այդ անագին ժամանակաշրջանում մեր երկրի ոչ միայն  
օրդանական կեանքը, այլ և նրա մակերեսոյթը անթիւ փոփո-  
խութիւնների են ենթարկուել այնտեղ, ուր այժմ ցամաք է,  
մի ժամանակ ծով է եղել և ընդհակառակը: Այնտեղ, ուր առաջ  
տափարակներ էին տարածւում—այժմ՝ խրոխտ կանգնած են  
հսկայական լեռնաշղթաներ ձիւնափայլ գագաթներով: Իսկ մի  
այլ տեղ նախակին լեռները մաշուել քայլայուել են և հարթ  
դաշտեր առաջացրել:

Երկրի իւրաքանչիւր կէտում կարելի է տեսնել նրա ան-  
հուն անցեալի հետքերը և նրա մակերեսոյթի փոփոխութիւնները:  
Լեռների կնճուներն ու նրանց խճճուած հանգոյցները ևս ի-  
րանց ուղղութիւնների մէջ որոշ կանոնաւորութիւն են ցոյց  
տալիս: Ահա գլխաւորապէս այդ վերջին հարցին է նուիրուած  
վերև յիշած գրբոյկի նիւթը: «Այս գրութեան նպատակն է, ա-  
սում է հեղինակը, պարզել Հայկական լեռնաշխարհի կազմու-  
թեան հիմնական գծերը և ցոյց տալ նրա կապը հարեան եր-  
կրրների հետ՝ գոյութիւն ունեցող երկրաբանական և տեղա-  
գրական նիւթերի, ինչպէս և անձնական գիտողութիւնների հի-  
ման վրայ»: Եւ հեղինակին որոշ չափով աջողուել է հասնել իր  
նպատակին, ինչպէս կարելի է համոզուել նաև նրա կազմած  
քարտէղից:

Դիբախտաբար գրուածքի լեզուն չոր ու ցամաք է, . ծանր

ու նեղ մասնագիտական, այդ պատճառով դժուարութեամբ է կարդացուում, չը նայած անգամ բրօշիւրի փոքր ծաւալին (37 երես): Մեղ թւում է, որ զիտական լրջութիւնը կարելի է միայնեւ ոճի պարզութեան և դիւրամատչելիութեան հետ. միայն այդ պայմաններում զիտութիւնը դադարում է մի քանի քուրմերի սեփականութիւն լինելուց:

I. Ա.

**21)** Отчетъ комиссіи присяжныхъ по зѣрненныхъ при Тифлесскомъ Окружномъ судѣ (отъ 19 марта 1900 г. по 19-е марта 1901 г.)

Անցեալ տարի մարտ ամսին, թիֆլիսի փաստաբանների ձեռներէցութեամբ և տեղիս նահանգական դատարանի հաւանութեամբ հիմունց թիֆլիսում մի համակելի հաստատութիւն՝ երդուեալ հաւատարմատարների մասնաժողով, իրակ դատարանին օժանդակիչ մնայուն օրգան:

Մասնաժողովի գործունէութեան շրջանը բացառապէս կազմում են երդուեալ փաստաբաններին և նրանց օգնականներին վերաբերեալ գործերը, որոնք առաջ քննւում էին միայն գատարանի ընդհանուր ժողովում, ինչպէս և ուրիշ տեղերում, ուր չը կայ երդուեալ հաւատարմատարների խորհուրդ: Հասկանալիք է, որ դատարանը, իրակ պետական հաստատութիւն, ծանրաբեռնուած միայն իրան յատուկ պաշտօնական գործերով, ոչ բաւականաշափ ժամանակ և ոչ էլ միջոց ունի փաստաբանների գործունէութեան բարդ և փափուկ խնդիրն հետևելու: Այժմ այդ կարերը և պատասխանատու գործը յանձննուած է նորերս կեանքի կանչուած հաստատութեան, իսկ դատարանին վերապահուած է բարձրագոյն ինստանցիայի դերը, ուր անցնում են մասնաժողովի որոշումները:

Պարզ է, որ զրանից փաստաբանական էտիկայի փափուկ խնդիրն աւելի կը կանոնաւորուի և ցանկալի ուղղութիւն կը ստանայ, ինչպէս այդ տեսնում ենք այն դատաստանական շրջաններում, ուր շատ տարիներ գործում են երդուեալ հաւատարմատարների խորհուրդները:

Անցեալ մարտ ամսին լրացաւ թիֆլիսի վերոյիշեալ մասնաժողովի գործունէութեան առաջի տարեշրջանը. այդ ապիթով հրատարակուած տարեկան տեղեկագրից երեսում է, որ անցեալ տարի թիֆլիսի նահանգական դատարանի շրջանում հաշւում էր 59 երդուեալ հաւատարմատար և զրանց 25 օգ-